

զաքական երկպառակութիւնք, յաւեր և ՚ի կրոճանումն տարիին զքազաքը:

Ունի կրընոալ ձեմարան, դպրոց իրաւաբանութեան, մատենագարան, թանգարան բնական պատմութեան ու հնութեանց, և պարտէղ բուսաբանա-

կան: Ծնած են հօս Պայար ասպետ, վոգանառն, Գոնտիյեապ, ու Պառնաւա, Գաղղիոյ քաղաքաց մէջ նախ կրընոալ բացաւ իր դռները Նարոլէնի առաջնոյն, երբ կը դառնար էլակա կը զիէն:

ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱԲՃԱԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՔ ՅԱՓՐԻԿԵ

Նիւթոի հովտէն քիչ հեռու գէպ արեմուտք, դիմացնիս լերանց երկայնանիստ գոտի մը կ'ելլայ, որ կը պաշտպանէ զեղիպտու անապատին աւազէն ու խորշակէն: Այդ լերանց միւս կողմը՝ կը տարածուի Լիբէաստան, երկիր մը՝ որ աւելի հնոց ծանօթ էր քան թէ նորոց. ահատը ծովմալազյ, ուր հաջիւ երբէ կը տեսնուին ովախիսր, և անսնք իսկ շարունակ նշաւակ եղած են աւազոց բուռն արշաւանց: Երկիրն թէպէտ մեռեալ ու անկենդան է, բայց քիչ տեղ կը գտնուի որ ասոր պէս ճոն ասպարէզ մ'ուննեայ ուսումնական քննութեանց: Վասն զի կը պարունակէ իր ծոցյն մէջ նախին պատմութեան նշարներ ու նախնջրէնեղեղեան ժամանակաց հետքեր: Հօն անապատին սեմոց գրոյ և քանի մը ծանօթ ովախիսից մէջ գտնուեցան կին մեհենաց աւերակներ ու գայլախազէ գործիներ, որոնք կը վկայեն թէ մարդկային նարտարութիւնը վաղժամանակեայ է. դարձեալ կը նշանակեն աշխարհացոյցը թէ հօն մեծ գետոյ մ'անկողին եղած ըլլայ, և կ'ըսուէր թէ Նիլոսի հիւզերէն մէկն ըլլայ, բայց ոչ ոք հասեր էր հօն: Հօնկէց կ'երթըցուէր նոյնապէս կիւրենական երկիրը, երբեմն բարեբնը Արկիլիոյ պէս, իսկ այսօր ամուլ անապատ մ'է և տեղի ժանտախտի, որ քստմնեցնել կու տուն Ոնեկաղի անունը, չինավայր տեղի, որ ելած է բներինկեայ աւերակներէն: Այս տեղեաց մօտենալու ատենդ, կարծես մեռելոց քաղաք մը կ'երթաս, ուր կին աշխարհակալաց կառքերուն գծած անիւներն, և Արխստիպեայ ու կալիմաքեայ և նախին բարգաւաճանաց յիշատակներն

կը ներկայացնեն երկիր մը կրկնապէս կենդանի, անձամբ ու պատմութեան կին անցքերով:

Ոչ ոք յարմար էր քան զԳերարտոս Ռոլֆս (Gerardo Rolfs) ՚ի գլուխ հանելու արշաւանք մը զոր որոշեր էր Եգիպտոսի Խոթիվ նոյն կողմերը զրկելու: Ռոլֆս արդէն տեսած էր կիւրենական երկիրը, և ըսած թէ ՚ի հնումն մեծ ծով մ'եղած պիտի ըլլայ ընդ մէջ Սիրթայ ու լիբէական լերանց: Կտրած անցած էր նոյնապէս Միջներկականէն մինչև կուխնէայի ծոցը եղած միջոցը և ուրիշ կողմերը. յանդուգն ուղենորութիւնք՝ որոց վրայ զարմացեր էր արգէն բոլոր աշխարհ: Այս նոր արշաւանաց առթիւ միացան հետք ուրիշ երեկելի անձինք ալ ու գիտնականք, որոց ամեն պէտք հոգալով Եզիդոտոսի կառավարութիւնը ճամբարայ գրաւ:

Մեկնեցան Սիութէ և դիմեցին գէպ ՚ի ֆարաֆրահ ովախսը, ուսկից կը մտածէր Ռոլֆս երթալ ՚ի Գուլֆարահ ոթ հարիւր քիլոմետր գէպ արևմուտք, թիպէսողի մօտ: Բայց զանազան ճանապարհորդաց ըսածին համեմատ, ընութեան անդիմադրելի արգելից պատճառաւ անկարելի էր նոյն կողմերը ուղենորել: Սակայն անձամբ ուղեցին փորձել իրենք ալ, և Քուֆարահէն վեց օր յառաջնէն ետքը, տեսան անապատը իր ահաւոր մերկութեամբը: Ոչ կանաչութիւն կար և ոչ թիզ մը հաստատուն երկիր, ամեն կողմանպատուղ աւազ մը՝ որ կ'եռար ոտից տակ, և կամ կը թռչէր օգոյ միջնն ամպանման: Ուղենորք ու կենդանիք պատրաստ էին ամեն բանի, ունին քսան օրուան համար ջուր ու կե-

րակուր . փոյթերնին չեր տաքութիւնն ու քամին , բայց կը վախնային տալուց օդաշու ու ուղերութենէն . Ոլովի յականայս շեղցաւ յարեւելս , և գնաց գէպ ՚ի Ալվահ ովասիսը , որպէս զի ապաստանարան մը գտնայ հօն , ուր կը բարձրանար երեխ մն Ամինի Արամազդայ մեհեան մը : Հօնիէց ալ զանազան ճամբաններով դարձան ՚ի Նիլոս . և թէպէտ զլիսաւոր նպատակնուն չի հասան , բայց օգտակար եղաւ զիտութեան իրենց այդ արշաւանքը . 250 մզն ճամբայ կորեցին , ոթսուն կտոր աշխարհագրական վրիսակներ ուղղեցին , երկրաբանական խորին քննութիւններ ըրին , և հետաքրքրական տեղեկութիւններ աւանդեցին տեղեաց բնակիչներուն վրայ :

Սակայն Ռոլֆսի մէկ արհասիրտ հայրենակիցն , կուսդավոս Նախթիկալ (Gustavo Nachtigal) կրցաւ յառաջել անապատին խորերը , լուսաւորեց հարաւային կողմերը , և ասիկա ափրիկեան ուղերութեան զլիսաւոր գործերէն մէկն համարուեցաւ . Պ. Նախթիկալ մեկնեցաւ Եւրոպայէն 1869ին , առնելու Պոռնուի Սուլդանին Գերմանիոյ պարզեները , որովք Կ'ուզէր վարձատրել Սուլդանին գերմանացի ճանապարհորդաց ցուցած մարդասիրութիւնը ու ըրած ձեռնտութիւնները : Նախթիկալ հասաւ ՚ի Տրիպոլոյ ՚ի Մուրզուք՝ կարաւանի սովորական ճամբով . բայց հօն հիւանդութիւնէ մը բռնուելով կարծածէն աւելի ուշացաւ : Բայց հազի թէ քիչ մը վրայ եկաւ , բռնի յապաղմանէն օգտուիլ ուղերով , ուղերոց ՚ի Թիպէսի , որ թէպէտ ծանօթ էր , բայց ոչ ոք համարձակեր էր մտնալու : Ժողովրդեան վայրագագոյն մասը լիրանց վրայ առանձնացեր էր , յորոց բռնուելով ու շարչարուելով Նախթիկալ , զատապարտեցաւ ՚ի մահ սովոյ ու խոշտանգանաց . բայց փախըստեամբ ապրեցաւ : Գնաց ապա ՚ի Պոռնու , ուր Գերմանիոյ պարզեները մատուցանելն ետքը , երկու կարեոր արշաւանք ըրաւ , մէկն ՚ի Պախթիրմէ մինչեւ Ֆէլլաթահ լեռները , և մէկայն ՚ի Պոռկու և ՚ի Պոթըլէյ , ուր գտաւ նոր գետոյ ընթացք մը , որ 500 քիլոմետր տեղ կտրելն ետքը՝ կ'երթար կ'անհետանար Պոթըլէյի աւազուց մէջ : Գնաց ապա ՚ի Վատի , ուր իրմէ առաջ զնացեր էին ուրիշ երկու Եւրոպա-

ցիք , Վոկէլ և Պէօրման , (Vogel, Beurmann) , բայց թողուցեր էին հօն իրենց կեանքը : Այլ ինքն ընդհակառակին միրամբը ընդունեցութիւն գտաւ հօն , և հանգըստեամբ կեցաւ ժամանակ մի իրենց Ապէշը զլիսաւոր քաղցին մէջ , հիւանդութեամբ կորուսած ոյժը ստանալու , օգնութիւն ընդունելու , և կարգի դնելու արշաւանց առաջին արդիւնքները : Մեծ հիւասիրութիւն տեսաւ Այլ Սուլդանէն , որ հաւատաք ունեէր իր վրայ , և կը համարէր զինքը իրուե թանկազին թժժանք մը , և իրուե մարդարէ գալիք աղէտից : Եւ ահա աղէտքը պատերազմը հասաւ գրեթէ սահմանակից տէրութեան Տարփուրի վրայ , որ պատճառ եղաւ Նախթիկալի տակաւին իր հայրենիքը զառնալը ուշանալուն . և Եւրոպաւ երկար ժամանակ վըրան լուր չառնելով՝ կը համարէր թէ մեռած ըլլայ :

Տարփուրէն չկրցաւ ուղիղ ճամբով Եղդիպոս մօնալ . վասն զի կարաւանք լսելով որ Եղդիպոս նորանոր հարկեր գրեր ու խիստ հսկողութիւններ կ'ընէ գերեվաճառութեան , և կը պատրաստուի արշաւանք Մ'ընելու ցրուեցան , և Նախթիկալ ստիպուեցաւ յապաղել գէպ ՚ի Քորտովան երթը . ուր տարաւ վերջապէս իր գիտնական զիւտոց ուրախ լուրերը , և սորվեցուց Եղդիպոսի Ֆաշիկը երթալու ճամբան , և յայտնեց թշնամույն զօրութեան գաղտնիքները . կարեոր տեղեկութիւնք , որոնք գիւրացուցին գերեվաճառաց , վղջոսկրի խաբերայից ու աւազակաց բոյնը եղդիպոտական գաւառ մ'ընելու :

Բայց գառնանք նորէն անապատը , որ ոչ միայն աշխարհագրապէս կարեոր քըննութեանց տեղի մ'եղած է , այլ և կ'առաջարկուի տնտեսապէս օգտակար ընել զայն , տանելով հօն Միջերկրականի ջուրերը : Անվերսայի ժողովշն մէջ մտածուեցաւ արմաւենիներ անկելով ու շաղափով ստորերկեայ ջուրերը վեր հանելով՝ բնակելի ընել այդ անապատը . խորհեցան դարձեալ ծով մը ստեղծել հօն , և հաւանեցան գործոյն կարելիութեանը , մտածելով զկողդարտոս , զԶննիգիոյ , ըզ-Սուէկ , զբանամա և զլմանչ : Թէէւ եղան ոմանք որ այս մտածութիւնը՝ հրապոյրք մարդարեական աշխարհագրութեան անուա-

նեցին, սակայն այնու հանդերձ վէրսայլի Ազգային ժողովը քուէարկեց այդ տուած արկութեան համար պէտք եղած գումարը, և զիտնականք գովեցին զայն ծափածայն։ Առաջարկութիւնն կրնայ հրապուրական թուիլ, բայց միթէ կատուն համարական չէր որ ապնիւ պուուզներ ներկայացուց Հոռովին ծերակուտին, զորոնք երկու որ տուած ժողվեր էր Նումիդիոյ պարտէգերէն։ Ինչու համար ուրիշներ նայն անապատին իրեն առջի ձեւ տալով՝ սիրտ չնորոգուի նոյն հրաշքը։

Ավրիկեան ցամաքին այն կողմը ուր Միջներկականն խորուն ծոց մը կը փորէ ու կը ձեւացնէ երկու աւազակոյտներ՝ յորոց կը վախնային երբեմն նաւորդ, անոնք ևն որ կը պատերազմին անապատին դէմ, անոնք են որ նուաճած են ծովուն ջուրերը ու ամփոփած անոնց իշխանութիւնը։ Տիբառնի աւազուաը՛զոր կը յիշէ Հերոդոսոս, և ուր Պինդար թափառէկու տայ զիւփիմոս ՚ի խնդիր լաւագոյն բախտի, և որ նկարազրուած է ճշգութեամբ Պալումէոսի զրոց մէջ, երբեմն նեղուցով մը կը հազորդէր ծովուն հետ, որուն միջնով կը մըտնար ծովը մակրնթացութեամբ մինչև ՚ի խորս աւազուտին, և կը ծածկէր այն ազային ճահիճները՝ որ կը տարածուին այսօր մինչև ՚ի ներքասակողն Ալճերից։

Բայց կարելի՛ էր արգելօք ջուրերը նորէն հոն գործընել ուսկից մղուեցան աւազուց բանութեամբ, և ուր աղային լճերն իրենք իրենց մնալով ճահիճնեղն։ Ոմանք ՚ի ըքնազնից և յաշխարհազիտաց անձամբ քննելով այդ կողմերը, հաստատեցին թէ կարելի է. բայց բաւական չէր այսշափը. սիէտք էր պտրտել ըոլոր երկիրը, չափել խորութիւնը ու տարածութիւնը, և իմանալ թէ մըշափ ովասիսք սիրտի խափանուէին ու որչափ նորեր սիրտի հաստատուէին նորափոր ծովուն ափունքը, որ 270 քիլոմետր երկայնութիւն ու յիսուն կամ վաթսուն քիլոմետր լայնութիւն սիրտի ունենար։

Այս կարելոր իրաց քննութիւնն յանձնուեցա Պ. Ռուատէրի (Rouadair), որուն ուղեկցեցաւ և Պ. Տիւվեյրի (Duvreyer), նոյն կողմանց հմուտ աշխարհագէտոն։ և մէկ ամիս չուևած քննեցին Մէլ Ափր ճահճին ըոլոր հիւսիսակողմը. գտան որ նորափոր ծովն սիրտի կլէր ոչ միայն Նէլյա

ովասիաը՝ իր հինգ հազար արմաւենիներ բովվէ, այլ և ուրիշ շատ ովասիաներ ալ, և հիտեաբար պիտի կորսուէին այն ազնիւ և ընտիր արմաւքն զորս կը վայելենք, Շւարեմն խնդիրը տակաւին քննութիւնն տակէ, որ եթէ յաջողի ու արդինաորդի, տարակոյս չկայ որ շահաւետ պիտի ըլլաց քննիչ աշխարհազիտաց, որոնք պիտի կարենան հաստատուն կայան մը գտնալ հօն։ Վասն զի երկիրն լի է սրգելքներով, և երեմն ամբողջ կարաւաններ ալ գոն Կ'ըլլան յանզգաստու։

Ռուատէրի քննութիւններով ծանօթացան նաև Թունիդի նուազ ծանօթ կողմերը։ Անցած տարի գարնան գնացին հօն երկու ուրիշ զիտնական Գալլդիացիք, Թիրո և Ռեպաթէլ (Tiraut, Rebatel), բուսաբանական բննութեանց հսմար։ Այս չուեցին ՚ի Քրոմպալիս, յլիմանադ և ՚ի Սուսա, տեսան Թիստրոյի թատրոնը, հսկայ մը անապատին մէջ, յայտնի վկայութիւն հոռմէտիկան համճարոց ու զօրութեան, և անխար նշան նոյն կողմանց քաղաքակըրթութեան ու արգասաբերութեան։ Արգէն բազումի լուսաւորած են այդ աւերաները ու թիստրոյ մօտաւոր քաղաքը, որ աթոռ եղած է ծովովց մը ու թատր կրօնական բուռն երկպառակութեանց, որոնք պառակտեցին ավրիկեան եկեղեցին քրիստոնէութեան աւաշին դարերուն մէջ համար յարակաց շինութիւնը ՚ի ինչպիսի են հեռագիրք, և գուցէ քիչ տանենէն նաև երկաթուղթիք սիրտի միացընեն աշխարհին գլխաւոր կէտերը իրարու հետ, որովք աշխարհազիտական քննութեանց կենդրոն մը կրնայ ըլլալ թունուզ գէպ ՚ի ներքսակողն Ավրիկէի։

Թունիդի արևմտեան սահմանէն անդին ինչպէս նաև Ավրիկէի հիւսիսակողմը, կայ երկիր մը ուր աշխարհագէտք շարունակ կուրի հետ են։ ուր, ինչպէս ՚ի Խիվա և Յաշին, զիտութիւնն ոչ միայն քաղաքակըրթութեան ազնուական զիտսան պիտի ծառացէ, այլ և աշխարհակալելու ու քաղաքական ազգեցներու համար։ Ա՛վ որ աշխարհացոյց տախտակի մը վրայ զիտելու ըլլայ Ավրիկէի արևմտեան կողմը, կը տեսնայ որ Գալլիկա երկու

գաղթականութիւն ունի հօն, յԱլճերի և ՚ի Սենեկալ, և այս երկու աշխարհաց մէջ կը տարածալի մեծածաւալ երկիր մը, զրեթէ անձանօթ ու քնակարան վայրենի ժողովրդոց։ Հօն Գաղղիացի աշխարհագրական արշաւանքներն ապացին բնութիւն մ'առած են, և ճամբար կը բանան վաճառականութեան ու տիրապետութեան։

Սենեկալէն ալ վար իջնանք, և կը զբոնանք զԱշանդ վայրենի ժողովուրդն, որ երկար ժամանակ Եւրոպից մտադրութեան նիւթ եղաւ. իր Անդզիոյ դէմտուած պատերազմներով։ Այս ժողովուրդն տիրելով Օսկուց Ափանց բարձանց վրայ, կը տարածէր իր ազգեցութիւնը մինչև Տահոմէյի Բազաւորութեան ու Պասսամի գաղղիական գաղթականութեան վրայ։ Իր Գումասսի մայրաքաղաքն 50,000 քնակիչ ունէր, հարուստ ամրաշնչ հիւղերով և ոսկով։ Ամեն ամիս մարդարուն ունի, յորում ամբողջ ժողովուրդն արբեալ ունախ, առաջին ու աղիտարեր պարգև քաղաքակրթութեան, քահանայ ու գահին Կ'ըլլայ միանգամայն, և Կ'ընծայէ իր պիղծ ոզիներուն մարդոց ու կենդանեաց արին՝ խառնած իրարու հետ։ Երկիրը բոլոր ճախճախուած անտառ մ'է, զոր իմացաւ անդղիական բանակն, և ստիպուեցաւ քալել հսկայաբերձ ծառոց վրայէն։ Վորոնք տապարաւորք յերկիր կը կործանէն։ Այդ անտառաց մէջ Կ'աճին վայրենի կերպով զանազան օգտակար տուներ, և Կ'ապրին բազմաթիւ գաղաններ, և գետերն ալ լի են ծիագետիներով ու կոկորդիլոսներով, և կան անթիւ Ճճիք՝ որոց խածուածքն մահացու է։ Դիւրին է գուշակելթէ ինչպիսի մեծամեծ ժուռարութեանց հանդիպեցաւ անդղիական բանակն մինչև ՚ի Գումասսի հասնելու համար։ Եւ սակայն հասաւ ու յաղթեց, և կրակի տուաւայդ մայրաքաղաքը, և Բազաւորին վճարել տուաւ յիսուն հազար տնկի ոսկի։ Գիտութեան համար շատ օգտակար եղաւ այս պատերազմը, բայց արդեօք Անդզիոյ տէրութիւնն ալ օգտեցաւ հաւասարապէս, ասիկա երկրայական է։

Հասանք հիմա Հասարակածը, ուստի ներուի մեզ պատմել համառօտիւթ է ուրշափ արեւելեան ու արեւմտեան արշաւանք Կ'աշխատին լուծելու հասարակածային Ա-

փրիկոյ գաղտնիքները։ Բայց աեւմանք նախ երկրին ջրոց ընթացքը։ Զորս մեծամեծ գետեր ունի, որոնք կը բերեն ՚ի ծովանձուաց ջուրերը։ Կ'իկեր գետ որ կը բզիսի վոնի լեռներէն, և ընդունելով զառուակսն մինչեւ ՚ի Անդեկամպիա, երկայն ու օձապտոյս ճամբով անապատին քովին քերելով։ Կու գայ կը թափի կուինչայի ծոցոյն մէջ, Զամպէզ գետ, որ կը բզիսէ Մովամպիրի լեռներէն, և ոռոգելով զիվիքիր, ու ամփոփելով Գալակարի միայնութեան աղամանգարեր վտակոց ջուրերը, կը թափի ՚ի ծով Սովալայի մօտ։ Կ'իկեր ու Զամպէզ ըստ բաւականի քննուած են, և իրենց ազբերակունքն ու ընթացքը որոշուած, Բայց ընդ հակառակն Նկրոսի աղբերակը տակաւին անշայտ է. իսկ Գոնկոյի վրայ այնչափ տեղեկութիւն ունենիք, որ ընդարձակ տարածութիւն մը պիտի ունենայ։

Զամպէզ Ափրիկոյ ամեն գետերէն աւելի արժանի է կրելու իր վրան Լիվինսոնդընի անունը. որովհեան գիւցազն ու արիտասիրտ ճանապարհորդն ապրտեցաւ։ ոչ միայն անոր՝ այլ և բոլոր օժանդակ գետոց ընթացից երկայնութեամբ։ Երկայն ու աշխատալից ու զեւորութեամբ իմացաւ նա որ բոլոր մեծատարած աշխարհն այսր քան զ10 աստիճան հարաւային լայնութեան, կը թափէ իր ջուրերն երկու նուազ ծանօթ գետոց միոյն մէջ Նկրոսի կամ Գոնկոյի։ Զամպէզն վեր չկայ ուրիշ մեծ գետ մը որ թափի ՚ի Հնդկաց Ավլիիանոս, և սակայն այդ երկիրներն առատանջուր են։ Այս ջուրերն պէտք է որ իջնան ՚ի ծով կամ յարեւմտից Գոնկոյի ընթացքով, և կամ ՚ի հիւսիսով, եթէ չեն անհետանար ներըն կասպիականի մը մէջ։

Լիվինսոնդըն կը համարէր ՚ի սկզբան թէ ՚ի Նկրոս Կ'իչնան, և հաստատապէս միտքը դրած էր որ Թանկանիքա մեծ գետի մը հետ կը խառնուէր, որով կը վերանորոգուէր Դիոգորի Սիկիֆացւոյ կարծիքը։ Այս ենթագրութիւնն շատերէն ընդունուելին ետքը յԵւրոպա, լուսեցաւ թէ սիսալէ վերջին ճանապարհորդաց նորանոր քննութիւններով, յորոց իմացուեցաւ հաւասականաբար թէ Թանկանիքայի ջուրերը Գոնկոյի մէջ կը թափին։ Վէճը արծարծեցաւ, և ստոյդ ուսումնեական պա-

տերազմ մ'նդաւ, որոն մասնակցեցան գրեթէ ամենայն աշխարհագէտք, Ամենայն ոքուաց ապացուանել իր կարծեաց ստուգութիւնը, և 'ի նպաստ փաստեր փնտըռեց կին աշխարհացոյց տախտակաց վրայ, 'ի վաճառականական յիշուակարանս, 'ի գիրս ճանապարհորդաց և 'ի քերթուածս: Աշխարհագրական ընկերութիւնք միջոց մատակարարեցին և ճանապարհորդք տեղեկոթիւններ, և յամաց հետէ կը տեէ պատերազմը, բայց Գոնկոյի կուսակիցք աւելի յաղդող կ'երեին:

Մինչդեռ տակաւին կը շարունակուէր վեճը, ձայն ելաւ թէ Լիվինկսդըն մեռած ըլլայ իր փառաց դաշտին վրայ: Արկա ուրիշ անդամ մ'ալ զուրցուած էր, բայց ապա սուտ ելած, և համարուած թէ կորսուած ըլլայ: Ուստի Լոնսուայի աշխարհագրական ընկերութիւնն մտածեց մէկէն մարդ դրկել որպէս զի փնտուն այդ արդիւնաւոր ճանապարհորդը, քալեն յԱփրիկէ, և քննեն ու լուծեն մեծամեծ դաշտնիքները: Բայց Պ. Կորտըն Գէննէդ (Gordon Bennett) նի Եօնք Հերալդ լրագրուն խմբագիրն, անմնալով որ կը դանդաղէր Անգլիա 'ի գործ, դրկեց իր առանձին ծախութը զՊ. Ստենլէ (Stanley), 'ի խնդիր Լիվինկսդընի, որ հասաւ 'ի Զանդիպար և 'ի Թանկանիքա, գտաւ զիս և մէկտեղ զանազան քննութիւններ ըրին Արքիոց այլ և այլ կողմէները, Երբ Ստէնլէի նամակն Ամերիկա հասաւ, աւետելով թէ ողջ է Լիվինկսդըն, մեծ եղաւ ամենուն ուրախութիւնը: թէ և Եւրոպա կը թերահաւատէր, բայց ապա տեսաւ արգեամբ թէ ճշմարիտ էր Լիվինկսդընի գտնուիլը:

Լիվինկսդըն գտնուեցաւ, բայց խնդիրն անլուծանելի մնաց, վասն զի տակաւին չէր դիտուէր թէ ուր կ'երթային Թանկանիքայի ու Հասարակածի տակ եղող ուրիշ ըներուն ջուրերը: ի նպաստ Գոնկոյի կղող փաստերն երթալով կ'աւելնային, թէ և Լիվինկսդըն և իրեն հետ բազումք՝ կը տարակուսէին: որոց համար Կիլսոն մեծ կարեւորութիւն ունէր, և բոլոր Արքիկէի ջրոց իրեւ կենդրոն կը համարուէր: Ուրեմն ով կարենար գտնալ ու հետեւիլ այն մեծ գետոյն ընթացից՝ որ Թանկանիքային կ'ելլայ, և ով ար յաջողէր 'ի վեր ելանել Կի-

լուէ ու Գոնկոյէ, այնպիսին մեծ գործ մը կատարած կ'ըլլար. կը գագրէին ամենայն վէճը, և կը պարզուէր աշխարհագրական ամենամեծ գաղտնիք մը, կետարբըրքաւական յետ բնեուին:

Անգլիացի, Գաղղիացի ու Գերմանացի ժրանան աշխարհագէտք զանազան ճամբաններ ընտրեցին շուտով ու դիւրութեամբ լուծելու այդ խնդիրը: Անգլիա՝ որ միւս ազգերէն աւելի վարդ էր ուղևրութեան, դիմեց մէկէն 'ի Հասարակածն երկու կողմանէ: Պ. Լուվէդ Փէմըրոն (Lovett Cameron) մեկնեցաւ Զանգիապարէն սովորական ճամբով գէպ 'ի Թանկանիքա, և Պ. Կրէնտի (Grandy) գէպ 'ի Գոնկոյ: որոնք պիտի գտնային զիրար Հասարակածի տակ:

Պ. Կրէնտիի արշաւանքն գրեթէ ապարդիւն մնաց: Լսեց ճամբան Լիվինկսդընի մակը, և վրիպելով իր զիմաւոր նպատակէն, ետ դարձաւ վերստին կարգաւորուելու ու զօրանալու պարարով և այլ կարեւորք: Նոյնպէս Պ. Փէմըրոն երբ հասաւ յիւնիանեկմակէ, լուր առաւ թէ Լիվինկսդըն մեռեր է 'ի Մարդարա 1873ին ասդիլի 22ին, Մեռեր էր աներկիւզ ճանապարհորդն Մովկէսի նման առանց տեսնալու աւետեաց երկիրը, բայց կը ձգէր արժանաւոր յաջորդները: Պ. Փէմըրոն անյապաղ առանց վայրկեան մը կորուսանելու՝ գնաց յիւնիմի, փնտուելու հօն մեծ ուղեւորին թուղթերը ու գրուածքները, որոց մէջ կը յուսար գտնալ կարեւոր տեղեկոթիւններ: Բայց վրիպելով 'ի յուսոյն մտաւ 'ի լիճն, և բոլոր հարաւային կողմը պարտելէն ետքը: հասաւ միւս ափունքը, ուր տեսաւ մեծ գետ մը և համարեցաւ թէ իր գինտըռածն ըլլայ: Ասիկա Լուքուկա էր, որուն դիմացէն երկու անդամ անցեր էր Լիվինկսդըն, Պ. Փէմըրոն զանց ընելով քննելու մանրամասն ճին հիւսիսակողմը, որոշեց հետեւ այդ գետոյն ընթացից: Արարացիներէն առած լուրերով կը հաստատուէր իր կարծեաց մէջ որոնք կ'ըսէին թէ Լուալապա յՈւկարովնվա կը մտնայ, և ապա երկայն ընթացքով կը համնի մինչեւ 'ի մեծ ջորեն, ուր մեծամեծ նաւակներ կու գուն, և կան հօն սպիտակ մարդիկներ գեղցիկ տուներու մէջ: և կը ծախուի իւզարմաւոյ ու վղոսակը: Լիվինկսդըն հետեւ էր Լուալապայի մինչեւ 'ի Նիսկիէյ, ուս-

կից մինչև Գոնկոյի բերանը գրեթէ երկու ամսուան մէջ կերթացին Ալրաքը, և Պ իթէ-մըրոն կը հաշուէր որ վեց ամսուան մէջ կրնար հասնիլ հօն Ռէմինիէն:

Բայց Բնչպէս կրնային Ալրաքը զիտնալ Գոնկոյ անունը որ Բորդուգալոց լեզուով է. միթէ Կարելի էր հասնիլ երկու ամսուան մէջ Նիանկվէյէն ցԱղլանդականն. և այն գետն զոր Պ. Փէմըրոն Լուքուկա կ'անուանէ, չի կրնար շփոթած ըլլալ ուրիշ նմանածայն գետոց հետ: Ոչ որ կրնար այս հարցմանց պատասխանել եթէ ոչ նոյն ինքն Փէմըրոն, հատանելով այդ ճամբան և ստուգելով զայնս:

Ա.Ա. Գերմանացիք կը հակառակէին իրեն: Հասարակածային Ավրիկէն գէթ ՚ի քաղաքակրթութիւն և ՚ի զիտութիւն շահելու Համար, 1873ին գաշնագրութիւն մը հաստատուեցաւ Պետինու, Ֆրանքորդի, Տարմշգատի, Լիբրիայի, Տրեգուայի, Մունագոյի, Հալլի ու Համպուրիի աշխարհագրական ընկերութեանց մէջ, և անուանեցաւ Ավրիկիան բնելիորդին, որուն ծախուց համար սահմանուեցաւ հարիւր քան և հինգ հազար ֆրանք: Զանազան զիտնականք ճամբանց ընկանաց գէտ է, և անուանեցաւ Ավրիկիան բնելիորդին շահագոյն զայն առաջնորդ առաջնորդ է աշխարհիս գէսը: Բայց բախտոն անգիտացաւ այս արշաւանաց գէմ: Այն նաւն որ կը կրէր զգիսանականն, նաւարեկեցաւ Ավերա Լէոնէ ափին վրայ, և նաւարկողք հազիւ ապրելով սպասեցին ուրիշ նաւու մը նորանոր գործիներով ու պաշտով:

Պատժանի յարարերութեանց առաջին հատորն հրատարակուեցաւ, և կը բոլվանդակէ ազգի ազգի տեղիկութիւններ՝ Լուսնից, Մահանկոյ և Սինկայ աշխարհաց վրայ, Արպատմէ որ յանձնուած է Լուսնկոյի թագուորին ոչ մարդկան միոյն այլ և բնութեան հառավարութիւնը. անանկ որ եթէ մեռնին ձկներն և ընտանի կենդանիք, թէ որ պակասին անձրեք և հունք չյանդին, ինքն է պատժապարտոն: Այս զիտնարով զարմանք չէ թէ որ հինգ տարուան մէջ վեց թագաւորք փոխուեցան, և ոչ մէկն թագ կապելու ժամանակ ունեցաւ: Ժողովուրդն յետին աստիճանի մնութիւապաշտէ: անարգ ու չնչին բաներն անգամ աստուածացուցած պաշտօն կը մատուցանէ, արմաւէն

սկըսեալ մինչև ՚ի սոխն, և փղէն մինչև ՚ի մուկ. և ուրիշ ամեն տեսակ տունկեր ու կենդանիներ:

Վշսին թէ ներքասկողմերը նշանաւոր ժողովուրդ մը կայ որ Կորիլոյ կապիկն հետ կը բնակի: որոց գլուխը չափազանց մեծութիւն ունի, աշքերնին մէկ է և այն ալ ճակատնուն վրայ. մէկ է նոյնպէս թերնին ալ. մսակեր են, և կը կրճատեն զարտեանուն որպէս զի շընանան:

Անգիդոյ ու Գերմանիոյ հաւասար ուրիշ մէծ ու ժիր ժողովուրդ մ'ալ կայ, և են Գաղղիացիք: Այդ ազգը պատերազմէն ետքը չորս տարուան մէջ շատ աւելի աշխատացաւ զիտութեանց յառաջադիմութեան ու ծաւալման, քան թէ առաջ տասը տարուան մէջ, Բարիզու աշխարհագրական ընկերութիւնն շրաւելով այս ջանից ու եռանգան, նորանոր աշխարհագրական ընկերութիւններ հաստատուեցան ՚ի Պորտոյ, ՚ի Լիսն, ՚ի Թուլյու: Ինչո՞ւ ուրիշն Գաղղիա այս ամեն միջացներն ունենալով, դուրս պիտի մնար հասարակածային Ավրիկոյ մրցման ասպարիզէն:

Բայց ոչ Գոնկոյի հետեւել՝ որ գերմանական է, և ոչ Թանկանիքայի որ անկըռ-սպասոնեան է, այլ ուրիշ նոր ճամբայ մը փընտրել, Գոնկոյէն վեր կայ ուրիշ գետ մը Ոկուավայ, որ աշխարհիս գիմաւոր գետոց Կարգէն է. և կարծել կոտ տայ թէ աղբերակը շատ հեռու ըլլայ, և կ'անցնի մեծամեծ լճերու միջէն: 1872ին, Պ. Փոմբէններ (Compiègne) և Պ. Մարշ (Marschle) այս ճամբան ընտրելով յառաջեցին, որոնք երկուքն ալ վարժ էին այրեցած գուույն կիմային, շատ աւելի վատառողջ տեղզուանք անվաս անցած ըլլալով: Գնացին ՚ի Փերնանտ Վազ և ՚ի Գամա: ասպա ելանի ՚ի վեր՝ գետոյն գվաւուոր ընթացքէն, և եկան ՚ի Բահունիս և Ալբոթացիս, որոնք Ավրիկոյ ուրիշ ժողովուրդներէն աւելի այս բարի մասնութիւնն ու յատկութիւնն ունին որ հաւատարիմ են իրենց կնողը:

Եետոյ գացին յԱվենդացիս և յՈքանթացիս, որոնք շարունակ պատերազմի հետ են ուրիշ ցեցերու հետ, և անգութ բնաւորութիւն մ'ունին: Ընդունայն տեղ փորձեցին ճանապարհորդքն մտնալ անոնց մէջ, որ թէպէտ արիստիրտ էին, բայց քան զրու-

աղջ մահ վերագտու համարեցան զիկանս և զդարձ ՚ի հացրենիս:

Ուրիմն ամենայն ազգ ու գիտունք հետապուա են քննել զԱշիրիկէ ամենայն մասամբ, և թերեւ յաղթութեան վերջին օրը Հեռու չէ: Այդ բարբարոսաց երիկներ ունի շատ գժուարութիւններ: Միշերկրականէն մինչեւ ցԱռուան՝ ունիս քեզի օգնական ուղար, որուն քայլերը թէւ գանդաղ են, բայց աստակով է քան զկարւան: Ի Հարաւային Աշիրիկէ՝ կոյ ծանրաշարժ եղըն՝ որ կը տասին գրեզ մինչեւ ականց ու ոսկուց դաշտաց մէջ: Եթովքեան բարձանց վրայ ալ կան ջորին ու ձին՝ որ կ'օգնեն քեզի: Բայց Հասարակածի տակ մարզն է որ պատի կատարէ այս ամեն գործերը: Ճանապարհորդք պէտք է որ սեամորթից թիկանց վրայ ծանրաբեռննեն ամեն ունենածնին, ուստի հարկ կ'ըլլայ վարժել անսնցմէ տարող բանակով, որնք անյագ են և անհաւատարիմք, և յաճախ ընկերք աւագիաց:

Այս գժուարութեան յաղթելէն ետքը, կը մնայ լիիմային գժուարութիւնը: Հեղեղօրէն անձրեներն որ կ'ողողեն զերկիրն նոյեմերէն մինչեւ ցապիլ ամիս, ճոխ բուսաբերութեամբ կը խափանեն երիբը. որոց մէջ անկարելի է մոնալ, մինչեւ որ փիզն ճամբայ չբանայ, բնական տէր նոյն կողմանց: Եւ ոչ թիզ մը ցամաք երկիր կայ. և հօն ուր չի մտնար խոնաւութիւն, կը մտնան վեսասկար կինդանիներ, յաճախ մահառիթք, որոնք ամեն հնարագիւտ զգուշութեան ալ կը յապթեն երթեմն: Գետերն հուն չունին, առուակներն կը գետանան, ցած տեղուանք կը ճահճանան, և ճահճէք կը ծովանան: Եւ երբ անցնի բնութեան այս եղանակն, կը լեցուի մթնոլորտն մահաքեր չոգիներով:

Այս ամեն գժուարութիւններէ ապրող-

ներն կը հանդիսավին երրորդ դժուարութեան մ'ալ որ չարագոյնն է, այսինքն վայրինի բնակչաց, մս սկերթ ՚ի սովորութենէ և յաճախ յաւելորդագալուութենէ, զորոնք երբեմն ընծաներով պէտք է ամաքել, և երբեմն այ կոտիլ հետերնին, և մեռնիլ կամմենցընել:

Յօդուածոյս վերջ չտուած, կ'ըսենք որ Աշիրիկոյ սոկոյ ու ակսնց գաշտերն երթալով մեծ համբաւ: կը հանեն: Սովալոյ հոգակուշաներն և Օրանիի աւազուտքն մեծ ամբոխ մը փայտատարուց ու ականահատից ձգած են իրենց. ուրոնք անգամ մը հօն երթալէն եաթը սոկոյն ու ականց փայտատութենէ շանալով մէկ մ'ալ ետ չեն դառնար, և իրարու հետ միանալով՝ հասարակապետական կոռավարութիւններ կը կազմեն: Այն կողմերէն եկողն ուրիշ բանի վրայ չի խօսիր, բայց եթէ սոկոյ, իբր թէ հօն լեռներն ու գետերն բոլոր անովլեցուած ըլլային, այնպէս միշակն կը պատմէին Սողոմոնի փինիկեցի վաճառականներն. որ արդէն այն կողմերէն բնութիւն առաջարին պէտք եղած սոկին:

Անըլլոյ պիտի հասնի ժամանակ մը, որ Աշիրիկէ խնչպէս երթեմն, իրեն ոսկոյն ու ականց զօրութեամբ պիտի ծաղկի, բարգաւաճէ ու փափաքելի պիտի ըլլայ աշխարհի. պիտի հասնի ժամանակ մը, որ պիտի վերականգնին Հիսուսնա, կոռաւան, զինա, կիւրենէ, Արտինոյէ, Բերինիկէ և ուրիշ համբաւաւոր քաղաքներ: Եզիպատոս, Վճերի ու Թունազ, սկըսան արդէն շարժիլ ու զարթնուլ իրենց մահականգոյն թմրութենէն, թափել վրաներնին բարբարոսութեան հետքերը, և հետեւ իւրոպիոյ. և անշուտ պիտի ընեն իրենց աղքեցութիւնը նաև Աշիրիկոյ ներքսակող. մանց վրայ: